ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» հոկտեմբերի 2025 թվականի N: 623 - Ա ք. Գյումրի

ԱՂՈՒՆԻԿ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԹԻԿԻ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 1.8-րդ մասի «դ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Աղունիկ Դավթյանի 2025 թվականի հոկտեմբերի 27-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աղունիկ Դավթյանի 2025 թվականի հոկտեմբերի 27-ից անաշխատունակության մեջ գտնվելու կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Արմենուհի Դավթյանին՝ մինչև տնօրենի աշխատանքի վերադառնալը:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի N 6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Աղունիկ Դավթյանին

տրամադրված ամենամյա երկարացված արձակուրդը երկարաձգել 7 աշխատանքային օրով՝ անաշխատունակության ժամանակահատվածի ավարտից հետո:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է